Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
նոյեմբերի 19-ի N 1318 - Ն որոշման

«Հավելված N 1
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 9-ի N 1182 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՓՇՏԱԿՎԱԾ, ԿՈՐԱԾ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԶԵՆՔԻ ՈՒ ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են հափշտակված, կորած և (կամ) հայտնաբերված զենքն ու ռազմամթերքը հաշվառելու, հաշվառումից հանելու հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) **հաշվառման ենթակա զենք ու ռազմամթերք (այսուհետ՝ զենք ու ռազմամթերք)՝** հափշտակված, կորած և (կամ) հայտնաբերված (առգրավված, գտնված, կամավոր հանձնված) մարտական, ծառայողական, քաղաքացիական զենքի ու ռազմամթերքի բոլոր տեսակները, որոնք ունեն անհատական համարներ.

2) **զենքի ու ռազմամթերքի հաշվառման քարտ (այսուհետ՝ քարտ)** (N 1 ձև)՝ հաշվառման փաստաթուղթ (հափշտակված, կորած և (կամ) հայտնաբերված զենքին ու ռազմամթերքին վերաբերող), որը լրացնում է վարույթն իրականացնող մարմինը և ուղարկում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն (այսուհետ՝ ինֆորմացիոն կենտրոն)՝ հաշվառման վերցնելու համար.

3) **զենքի ու ռազմամթերքի հաշվառման քարտի դասակարգիչ (այսուհետ՝ դասակարգիչ)** (N 2 ձև)՝ պայմանական ծածկագրերի ամբողջություն, որոնք անհրաժեշտ են քարտը լրացնելու և քարտում նշված տեղեկություններն ինֆորմացիոն կենտրոնի կողմից քարտադարանում մուտքագրելու համար.

4) **հաշվառում՝** հափշտակված, կորած և (կամ) հայտնաբերված զենքի ու ռազմամթերքի վերաբերյալ՝ լրացված հաշվառման փաստաթղթի ընդունմանը, դրա մեջ նշված տեղեկությունների մշակմանը, համակարգմանն ու պահմանն ուղղված գործողություններ.

5) **զենքի ու ռազմամթերքի քարտադարան (այսուհետ՝ քարտադարան)՝** ինֆորմացիոն կենտրոնում գործող թղթային և (կամ) էլեկտրոնային եղանակով վարվող պահոց, որտեղ հավաքվում, մշակվում, համակարգվում և պահվում է զենքի ու ռազմամթերքի մասին տեղեկատվությունը:

3. Զենքն ու ռազմամթերքը հաշվառման վերցնելու հիմքերն են՝

1) զենքի կամ ռազմամթերքի հափշտակված լինելը.

2) զենքի կամ ռազմամթերքի կորած լինելը.

3) զենքի կամ ռազմամթերքի հայտնաբերված լինելը (գտնված, կամավոր հանձնված, առգրավված):

4. Սույն կարգի 3-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը վարույթն սկսելուց հետո ոչ ուշ, քան 3 աշխատանքային օրվա ընթացքում լրացնում է N 1 ձևի քարտը՝ դասակարգչի համաձայն, և այն ուղարկում է ինֆորմացիոն կենտրոն՝ զենքն ու ռազմամթերքը հաշվառման վերցնելու համար:

5. Հավաքովի զենքի յուրաքանչյուր տարբեր համար ունեցող միավորի (դետալի) համար լրացվում է առանձին քարտ:

6. Սույն կարգի 3-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հիմքի առկայության դեպքում վարույթն իրականացնող մարմինը զենքի ու ռազմամթերքի վերաբերյալ փորձագիտական եզրակացությունն ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում լրացնում է հայտնաբերված զենքի ու ռազմամթերքի վերաբերյալ քարտը և ուղարկում ինֆորմացիոն կենտրոն՝ զենքն ու ռազմամթերքը հաշվառման վերցնելու համար:

7. Եթե զենքը կամ ռազմամթերքն անհատական համար չունեն, կամ այն անընթեռնելի է, և փորձագիտական եզրակացության համաձայն՝ հնարավոր չէ պարզել դրա համարը, ապա զենքն ու ռազմամթերքն ինֆորմացիոն կենտրոնում հաշվառման չեն վերցվում:

8. Քարտում պարտադիր լրացվում են վարույթն իրականացնող մարմնի կողմից հարուցված գործի կամ կազմված փաստաթղթի անվանումը և համարը, փաստաթուղթը կազմելու (հարուցելու) ամսաթիվը, վարույթն իրականացնող մարմնի անվանումը, զենքի ու ռազմամթերքի տեսակը, մոդելը, արտադրող (պատրաստող) երկիրը, դետալի ծածկագիրը (եթե հաշվառման միավորը դետալ է), սերիան, համարը, տրամաչափը, արտադրման (պատրաստման) տարեթիվը, զենքի ու ռազմամթերքի նկարագրությունը (հատուկ նշաններ, վնասվածքներ), հաշվառման վերցնելու հիմքը: Քարտում լրացվում են նաև, թե զենքն ու ռազմամթերքն ով է կորցրել, զենքն ու ռազմամթերքը կորցնելու, հափշտակելու, հայտնաբերելու ամսաթիվը և վայրը, զենքի շրջանառության հետ կապված լիցենզիայի կամ թույլտվության համարն ու ժամկետը, լիցենզիա կամ թույլտվություն տված մարմնի անվանումը, զենքի ու ռազմամթերքի պատկանելությունը, պետական մարմնի, կազմակերպության, իրավաբանական անձի անվանումը, ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան ամսաթիվը, անձնագրային տվյալները, պետական մարմնի, կազմակերպության կամ իրավաբանական անձի գտնվելու վայրը

կամ ֆիզիկական անձի բնակության վայրը, զենքն ու ռազմամթերքը կորցնելու, հափշտակելու, հայտնաբերելու հանգամանքների նկարագրությունը:

9. Զենքն ու ռազմամթերքը նախքան հաշվառման վերցնելը ինֆորմացիոն կենտրոնն ստուգում է քարտում պարունակվող տվյալները:

10. Եթե պարզվում է, որ զենքը կամ ռազմամթերքն արդեն իսկ հաշվառված է ինֆորմացիոն կենտրոնում, կամ քարտում նշված տեղեկությունները մասամբ համընկնում են արդեն իսկ հաշվառված զենքի կամ ռազմամթերքի տվյալների հետ, ապա ներկայացվող զենքն ու ռազմամթերքը հաշվառման չեն վերցվում: Ինֆորմացիոն կենտրոնը մեկ աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր տեղեկացնում է վարույթն իրականացնող մարմնին, ինչպես նաև՝ նախկինում զենքն ու ռազմամթերքը հաշվառման ներկայացրած՝ վարույթն իրականացնող մարմնին:

11. Սույն կարգի 10-րդ կետում նշված դեպքերում ինֆորմացիոն կենտրոնի կողմից տրամադրված տվյալների հիման վրա՝ սույն կարգի 10-րդ կետով նախատեսված վարույթն իրականացնող մարմինները համատեղ պարզում են հաշվառման ներկայաց-ված և հաշվառման մեջ գտնվող զենքի ու ռազմամթերքի նույնականությունը:

12. Սույն կարգի 11-րդ կետով նախատեսված կարգով զենքի կամ ռազմամթերքի նույնականության հարցը լուծելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում զենքն ու ռազմամթերքը նախկինում հաշվառման ներկայացրած՝ վարույթն իրականացնող մարմինը համապատասխան գրություն է ուղարկում ինֆորմացիոն կենտրոն՝ զենքն ու ռազմամթերքը սույն կարգի 15-րդ կետով նախատեսված կարգով հաշվառումից հանելու կամ այն հաշվառման մեջ թողնելու վերաբերյալ: Ինֆորմացիոն կենտրոնն ստացված գրության հիման վրա անմիջապես կամ նախկինում հաշվառված զենքը և (կամ) ռազմամթերքը հանում է հաշվառումից կամ հաշվառման է վերցնում ներկայացված քարտում նշված զենքը և (կամ) ռազմամթերքը:

13. Զենքն ու ռազմամթերքը հաշվառումից հանելու հիմքերն են՝

1) հափշտակված կամ կորած զենքի կամ ռազմամթերքի հայտնաբերումը.

2) հայտնաբերված (գտնված, կամավոր հանձնված, առգրավված) զենքի կամ ռազմամթերքի պատկանելության պարզումը.

3) հայտնաբերված (գտնված, կամավոր հանձնված, առգրավված) զենքի կամ ռազմամթերքի հաշվառման օրվանից 5 տարին լրանալը, եթե քրեական գործ չի հարուցվել, իսկ հարուցված լինելու դեպքում՝ քրեական գործով վերջնական որոշում ընդունելը, բայց ոչ վաղ, քան տվյալ զենքի կամ ռազմամթերքի հաշվառումից հետո 5 տարին լրանալը:

14. Վարույթն իրականացնող մարմինը սույն կարգի 13-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում 3 աշխատանքային օրվա ընթացքում գրություն է ուղարկում ինֆորմացիոն կենտրոն՝ զենքն ու ռազմամթերքը հաշվառումից հանելու համար, նշելով հաշվառումից հանելու հիմքը և հայտնաբերման (կամ պատկանելության պարզման) ամսաթիվը:

15. Ինֆորմացիոն կենտրոնը սույն կարգի 13-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված հիմքերի առկայության դեպքում զենքն ու ռազմամթերքը հաշվառումից հանում է վարույթն իրականացնող մարմնից գրություն ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ սույն կարգի 13-րդ կետի 3-րդ ենթակետում նշված հիմքի առկայության դեպքում՝ ինքնուրույն:

16. Սույն կարգի 15-րդ կետով նախատեսված կարգով հաշվառումից հանված քարտերը հանվում են քարտադարանից և արխիվացվում են՝ արխիվային գործի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

17. Քարտադարանից անմիջականորեն տեղեկություններ ստանալու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը, Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը, Հայաստանի Հանրապետության

կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ստորաբաժանումները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության դատախազությունը, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն, Հայաստանի Հանրապետության դատարանները: Մյուս պետական մարմինները քարտադարանից կարող են օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների միջոցով՝ օրենքով սահմանված լիազորությունների սահմաններում: Ֆիզիկական և իրավաբանական անձինք քարտադարանից կարող են ստանալ իրենց պատկանող զենքի ու ռազմամթերքի մասին առկա տեղեկատվություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների միջոցով: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումները տեղեկատվությունը տրամադրում են պետական մարմինների, իրավաբանական անձանց գրությունները կամ ֆիզիկական անձանց դիմումներն ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում:

18. Քարտադարանից տեղեկություններ ստանալու համար հարցումները և դրանց պատասխանները ձևակերպվում են գրավոր: Քարտադարանից անմիջականորեն տեղեկություններ ստանալու իրավունք ունեցող պետական մարմինների և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանումների հարցումներին ինֆորմացիոն կենտրոնը պատասխանում է 3 աշխատանքային օրվա ընթացքում:

19. Հարցումն էլեկտրոնային եղանակով կատարելու դեպքում քարտադարանի ավտոմատացված համակարգը տրամադրվող տեղեկությունը հավաստում է՝ նշելով տեղեկության տրամադրման ամսաթիվը և ժամը: Հարցման ու տրամադրվող տեղեկության մասին տվյալներն էլեկտրոնային եղանակով արձանագրվում և պահվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Քարտադարանի ավտոմատացված համակարգից էլեկտրոնային եղանակով տեղեկությունների տրամադրման կարգը հաստատվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
նոյեմբերի 19-ի N 1318 - Ն որոշման

«Հավելված N 2
ՀՀ կառավարության 2010 թվականի
սեպտեմբերի 9-ի N 1182 - Ն որոշման

Ձև N 1

Հ Ա Շ Վ Ա Ռ Մ Ա Ն Ք Ա Ր Տ

ՀԱՓՇՏԱԿՎԱԾ, ԿՈՐԱԾ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՁԵՆՔԻ ՈՒ ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ

1. Վարույթն իրականացնող մարմնի կողմից հարուցված գործի և (կամ) կազմված փաստաթղթի անվանումը
2. Վարույթն իրականացնող մարմնի կողմից հարուցված գործի կամ կազմված փաստաթղթի համարը _____
3. Կազմելու (հարուցելու) ամսաթիվը _____
4. Վարույթն իրականացնող մարմնի անվանումը _____

5. Ձենքի և ռազմամթերքի տեսակը
6. Մոդելը
7. Արտադրող երկիրը
8. Դետալի ծածկագիրը
9. Սերիան _____
10. Համարը _____
11. Տրամաչափը _____
12. Արտադրման (պատրաստման) տարեթիվը _____
13. Ձենքի ու ռազմամթերքրի նկարագրությունը (հատուկ նշաններ, վնասվածքները) _____
14. Հաշվառման վերցնելու հիմքը
15. Ձենքն ու ռազմամթերքն ով է կորցրել
16. Ձենքն ու ռազմամթերքը կորցնելու, հափշտակելու, հայտնաբերելու ամսաթիվը, վայրը _____
17. Ձենքի շրջանառության հետ կապված լիցենզիայի կամ թույլտվության համարը_____
18. Լիցենզիա կամ թույլտվություն տալու ամսաթիվը _____
19. Լիցենզիայի կամ թույլտվության ժամկետը _____
20. Լիցենզիա կամ թույլտվություն տվող մարմնի անվանումը _____

(քարտի դարձերեսը)

21. Ձենքի ու ռազմամթերքի պատկանելությունը

22. Պետական մարմնի, կազմակերպության, իրավաբանական անձի անվանումը _____

23. Ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ազգանունը _____

24. Անձնագրային տվյալները, ծննդյան ամսաթիվը _____

25. Պետական մարմնի, կազմակերպության կամ իրավաբանական անձի գտնվելու վայրը կամ ֆիզիկական անձի բնակության վայրը _____

(հանրապետությունը, քաղաքը, մարզը, գյուղը,

_____

փողոցը, շենքը, բնակարանը)

26. Ձենքն ու ռազմամթերքը կորցնելու, հափշտակելու, հայտնաբերելու հանգամանքների նկարագրությունը _____

_____

_____

Քարտը լրացնելու ամսաթիվը _____

Քարտը լրացրեց _____

(պաշտոնը, կոչումը)

Պետ

_____

(կոչումը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

_____ _____

(ազգանունը, ստորագրությունը)

Հեռախոսահամարը _____

Ձև N 2

Դ Ա Ս Ա Կ Ա Ր Գ Ի Չ

ՀԱՓՇՏԱԿՎԱԾ, ԿՈՐԱԾ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ՋԵՆՔԻ ՈՒ ՌԱԶՄԱՄԹԵՐՔԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՐՏԻ

Համարը	Ծածկագիրը	Քարտի բաղադրիչների անվանումները
1	2	3
		Վարույթն իրականացնող մարմնի կողմից հարուցված գործի կամ կազմված փաստաթղթի անվանումը
	01	քրեական գործ
	02	օպերատիվ փնտրողական գործ (քարտ-կուտակիչ) (ՕՓԳ(Ք)
	03	նախնական օպերատիվ ստուգման գործ (ՆՕՍԳ)
	07	մերժված նյութ
	08	արձանագրություն, ակտ
	09	զեկուցագիր
	10	հաղորդում (դիմում)
	11	հաղորդագրություն
	12	օպերատիվ ամփոփագիր
	13	օպերատիվ գործ (ՕԳ)
	15	օպերատիվ հետախուզական գործ (ՀԳ)
	16	օպերատիվ դիտարկման գործ (ՕԴԳ)
2.	թիվ	վարույթն իրականացնող մարմնի կողմից հարուցված գործի կամ կազմված փաստաթղթի համարը
3.	օր, ամիս, տարի	Կազմելու (հարուցելու) ամսաթիվը
4.	տեքստ	վարույթն իրականացնող մարմնի անվանումը
5.	ծածկագիր	Ջենքի ու ռազմամթերքի տեսակը
	01	սպորտային կարաբին
	02	սպորտային հրացան
	03	որսորդական կարաբին
	04	ինքնաձիգ
	05	ռևոլվեր
	06	ատրճանակ
	07	որսորդական ակոսափող համակցված հրազեն
	08	սպորտային ատրճանակ
	09	գնդացիր
	11	հրացան
	12	կարաբին (կարճափող հրացան)

1	2	3
	13	նոնականետ
	14	հրանետ
	15	ատրճանակ-գնդացիր
	16	ռազմամթերք
	18	հրթիռային սարքավորում
	19	թնդանոթ
	20	այլ
	21	ականանետ
	22	հատուկ միջոցներ
	23	կարաբինային ողորկափող հրացան
	24	գազային ատրճանակ
	25	գազային թմբուկավոր ռևոլվեր
	27	ազդանշանային զենք
	28	անփող հրազեն
	29	օդաճնշիչ զենք (պնևմատիկ)
	31	սպորտային ակոսափող հրազեն
	32	սպորտային ողորկափող հրազեն
	33	ողորկ-երկարափող հրազեն
	34	կարճ ակոսափող հրազեն
	35	երկար ողորկափող հրազեն
	36	որսորդական ակոսափող հրազեն
	37	որսորդական ողորկափող հրազեն
6.	տեքստ	Մոդելը
7.	տեքստ	Արտադրող երկիրը
8.	ծածկագիր	Դետալի ծածկագիրը
	02	փակաղակ
	03	փողակալ
	05	շրջանակ, կմախք
	06	փող
	07	պահունակ (փամփշտատուփ)
	08	թմբուկ
	09	փողի տուփը
	10	խզակոթ
	11	նշանառության սարք
9.	տեքստ	Սերիան
10.	թիվ	Համարը
11.	թիվ	Տրամաչափը
12.	թիվ	Արտադրման (պատրաստման) տարեթիվը

1	2	3
13.	տեքստ	Զենքի ու ռազմամթերքի նկարագրությունը (հատուկ նշաններ, վնասվածքներ)
14.	ծածկագիր	Զենքն ու ռազմամթերքը հաշվառման վերցնելու հիմքը
	02	հափշտակում սպանությամբ
	03	հափշտակում՝ ավազակային հարձակմամբ
	04	հափշտակում՝ տիրոջ և զենքի անհետացմամբ
	05	հափշտակում՝ այլ հանգամանքներում
	06	առգրավում
	07	հայտնաբերում
	08	կորուստ
	09	կամավոր հանձնում
15.	ծածկագիր	Զենքն ու ռազմամթերքը ով է կորցրել
	01	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության ծառայող
	02	ՀՀ ազգային անվտանգության ծառայող
	03	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ-ի ռազմականացված ստորաբաժանման աշխատակից
	04	բանկային համակարգի աշխատակից
	05	ՀՀ ՊՆ-ի զինծառայող
	06	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության զորքերի զինծառայող
	07	այլ պաշտոնատար անձ
	08	ֆիզիկական անձ
	10	մասնավոր պահնորդական կազմակերպության աշխատակից
	11	այլ
	13	մաքսային ծառայության աշխատակից
	14	ՀՀ պետական պահպանության ծառայության ծառայող
	15	դատախազության աշխատակից
	16	ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի սահմանապահ զորքերի զինծառայող
	21	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակից
	22	սուրհանդակային կապի ծառայության աշխատակից
	23	ԱՊՀ անդամ պետությունների զորամասերի զինծառայող
	24	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ծառայող
	27	հարկային ծառայության աշխատակից
	28	ՀՀ հատուկ քննչական ծառայության աշխատակից
16.	ամսաթիվ	Զենքն ու ռազմամթերքը կորցնելու, հափշտակելու, հայտնաբերելու ամսաթիվը
17.	թիվ	Զենքի շրջանառության հետ կապված լիցենզիայի կամ թույլտվության համարը
18.	ամսաթիվ	Լիցենզիա կամ թույլտվություն տալու ամսաթիվը

1	2	3
19.	ամսաթիվ	Լիցենզիայի կամ թույլտվության ժամկետի ավարտը
20.	տեքստ	Լիցենզիա կամ թույլտվություն տվող մարմնի անվանումը
21.	ծածկագիր	Զենքի ու ռազմամթերքի տիրապետողը (պատկանելությունը)
	01	ՀՀ պաշտպանության նախարարության զորամաս
	02	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության զորքերի զորամաս
	04	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության քրեական հետախուզության ծառայություն
	07	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչություն
	08	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանություն
	09	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության պարեկապահակետային ծառայություն
	10	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության հերթապահ մաս
	11	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության այլ ծառայություններ
	12	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչություն
	13	ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայություն
	14	զինվորական կոմիսարիատ
	15	թանգարան, ցուցահանդես
	16	ուսումնական հաստատություն
	17	այլ կազմակերպություն
	18	սպորտային ընկերություն
	19	բանկային կազմակերպություն
	20	կապի ծառայություն
	21	զենքի առևտրով զբաղվող իրավաբանական անձ
	22	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ-ի ռազմականացված ստորաբաժանում
	23	հարկային ծառայություն
	24	ֆիզիկական անձ
	25	այլ
	27	մասնավոր պահնորդական կազմակերպություն
	28	մաքսային ծառայություն
	29	ՀՀ պետական պահպանության ծառայություն
	30	ՀՀ դատախազություն
	31	ՀՀ ԿԱ ԱԱԾ-ի սահմանապահ զորքերի ծառայություն
	35	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն
	36	սուրհանդակային կապի ծառայություն
	37	ԱՊՀ անդամ պետությունների զորամասեր
	38	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայություն
	43	այլ պետական մարմիններ
	44	հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձ
	45	զենքի արտադրությամբ զբաղվող իրավաբանական անձ

1	2	3
	46	զենքի հավաքածուներ կազմելով կամ դրանք ցուցադրելով զբաղվող իրավաբանական անձ
	47	զենքի հավաքածուներ կազմելով կամ դրանք ցուցադրելով զբաղվող ֆիզիկական անձ
	48	մարզական և որսորդական տնտեսություն վարող կազմակերպություն
	49	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության համայնքային (պրոֆիլակտիկայի) ծառայություն
	50	ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության ուղեկցող ստորաբաժանում
22.	տեքստ	Պետական մարմնի, կազմակերպության, իրավաբանական անձի անվանումը
23.	տեքստ	Ֆիզիկական անձի անունը, հայրանունը, ազգանունը
24.	տեքստ, թիվ, ամսաթիվ	անձնագրային տվյալներ, ծննդյան ամսաթիվ
25.	տեքստ	Իրավաբանական անձի գտնվելու վայրի կամ ֆիզիկական անձի բնակության վայրի հասցեն
26.	տեքստ	Զենքն ու ռազմամթերքը կորցնելու, հափշտակելու, հայտնաբերելու հանգամանքների նկարագրությունը

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ